

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Նկարիչի և ձեռնարկի

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Ե Ի Կ

Ծանոթացան տար
20 ամսեայի



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Ե

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշմիք ես

չեմ տրոշիր

Հասկանալի տեղեկություններ
այս շաբաթիկայ չորեքշաբթի օր
ԻՐԱՎԱՆԻԿ չի պիտի հրատա-
րակուի:

ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ահա ընդօրինակությամբ այն
հանրագրություններն որ մեր նախորդ
թիվի խմբագրականին առիթ տը-
րաւ. ասով հայրենիքի Ս. դա-
տին համար սկսուած յեղափոխու-
կան գործը կուսակցական և անհ-
նական ամէն նկատմանից վեր
դասելու պահանջն է որ կը ներ-
կայացնէ հայ ժողովուրդը: Չէզոք
կամ անտարբեր կարծիքով դա-
սակարգի մէկ ստուար մասն ալ
հոն կստոր գրէ, յստակօքն ցոյց
տալով թէ ինք, ժողովուրդը, ալ-
եւս չուզեր անտարբեր մնալ յե-
ղափոխական կազմակերպութեան
յաճախակի հրապարակի վրայ բե-
րած եղբայրաբար կռիւներուն: Դ-
րոշք ուղղակի բուն գործին փա-
սելէ զատ ուրիշ արդիւնք չեն
տուած, ալ կը պահանջէ որ այդ
վեճերը, այդ անհասկացողու-
թիւնները գրուին ձեռնհաս մարմ-
նոյ մը, Ընդհ. Պատգմ. Ժողովի
մը, քննութեան տակ, վեճեր դա-
տելու, յանցանքները ու յանցանք-
ները որոշելու, գործուած սխա-
լները ուղղելու, ապագայ գործու-
նէութեան ուղին գծելու և վեր-
ջապէս մեր բոլոր յեղափոխական
կազմակերպութեան Ընդհ. Միու-
թեան հոգը պատրաստելու էն
նպատակաւարմար ու կտրուկ մի-
ջոցն է որ կուսակցական ժողովու-
րդը իր այս հանրագրութեամբ, ու-
րուն տակ արդէն հարկւրաւորներ
ստորագրած են սա երկու օրուան
մէջ:

Փափաքելի է որ ուրիշ բոլոր
հայաբնակ քաղաքներէ նոյն ի-
մաստով հանրագրութիւններ ուղ-
ղուին յեղափոխական կեդրոնե-
րուն, որոնք չպիտի կրնան ազգին
այդ իմաստուն և օրինական պա-
հանջին ընդդիմանալ:

ՀԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐԿՈՒ ՀԱՏԱՌԱՅՆԵՐՈՒՆ

Սիրելի հայրենակիցներ:

Երբոր, առկէ ճիշտ տարի մը առաջ,
Հնչակի միջոցաւ առաջին անգամ տա-
րածուեցաւ իւր համայն հայ հասա-
րակութեան, Հնչակեան պատկաւած
երկու հատուածներու միացման իրո-
ղութիւնը անսահման ուրախութեան
զգացում մը եկաւ պատել բոլոր հայ-
կական անկեղծ սիրտերը, բոլոր մար-
տիրոսացած հայրենիքի ցաւով ու կա-
րօտով տանջուող պանդուխտները,
թափառական վտարուածները ու գաղ-
թականները, բանտերու խորերուն մէջ
լուռ ու մունջ հեծող հայ հոգիները,
ամէն դասու, ամէն զբաղումի պատ-
կանող հայ անհատները, արժարժու-
ցաւ վառուեցաւ բոլոր մը մարմնու վը-
րայ եղող յոյսը: Վերահաստատուեցաւ
խախտուած հաւատքը զէպի շարժա-
րած հայրենիքի փրկութեան գործը:
Նոր ոգով, նոր կրակով կենդանացած
բոլոր ինկած ու հիասթափուած մըտ-
քերը, ու ամէնուն մէջ, ամէն այն
սրտերուն մէջ, որոնք քայլ առ քայլ
հետեւած էին ու կը հետեւէին այս ա-
հեղ գոյութեան պարթարին կրած բո-
լոր ձեւափոխութիւններուն, բոլոր
յաջորդական փափուները, կազմուեցաւ,
գոյացաւ այն խոր զգացումը, մտքե-
րու մէջ այն գիտակցութիւնը, թէ
Ազգային գոյութեան վտանգը անցած
է և թէ դարեւ ի վեր անձկանօք
սպասուած ցանկալի ազատութիւնը
կարող է գեռ ձեռք բերուիլ: Ըստ որում
ամէնքը ուղիղին Հնչակեան այդ Միու-
թեան մէջ տեսնել փրկութեան գործին
յատկացուած երաշխիքներէն մին և
նախադուռը ընդհանուր Հայ Յեղափո-
խական ուժերու ամբողջական միաց-
ման, ընդհ. հայ յեղափոխական ամէն
կարգի կուսակցութիւններու ի մի հա-
մախմբման: Երբոր գիտակից հայ
մտքերու ու սրտերու անդրադարձի հա-
մագումն ու անդուստի զգացումնէ դար-
ձած այլ ևս, որպէս յաջորդութեան
և յաղթանակի միակ պայման, որպէս
ժամանակներու անվիճելի պահանջ:

Դժբաղդաբար Հնչակեան Միութեան
յառաջ բերած ուրախութիւնը շատ
կարճատեւ եղաւ, և ահա հազիւ տարի
մը բոլորած, երկու հատուածները,
կրկին բունուած անմիաբանութեան ու
երկպառակութեան ճիւղներու մէջ,
կսպառնան իսպառ խզել, և այս ան-
գամ գուցէ անգաւառի կերպով, այն
փառաւոր Միութիւնը, որ մի բոլոր
եկաւ կենդանացնել հայկական մարտ
սրտերը:

Այս բոլորիս, ամէնուն համար տե-
նելու է և անհերքելի, քանի որ ալ

եւս հրապարակ հանուած է ամէն ինչ,
որ Հնչակեան կուսակցութիւնը կը
գտնուի ծանր տագնապի մէջ, որ կտ-
տայուած Միութիւնը, հակառակ տըր-
ուած ամէն հաւաստիքներու, ենթարկ-
ուած է խզման վտանգին, որ քանի
կը շարունակեն գոյութիւն ունենալ
իրարու հակառակ երկու հակընդդմ
նոյնանման կեդրոններ, երկու նոյնա-
նման բայց տարաբովանդակ պաշտո-
նական օական, այլեւայլ տեղերու մէջ
երկու միմեանց դէմ գործող գործիչներ
ու մասնաճիւղեր, ի գուր է հաւատա-
ցնել այլեւայլ յայտարարութիւններով
եղած բերանացի ու գրաւոր, թէ ե-
ղածը ոչինչ է. թէ ամէն ինչ կընթա-
նայ ամենալաւ կերպով և բաղձացուած
ուղղութեամբ: Զուր է հաւատացնել
նաեւ որ բոլոր խնդիրը որիչ բան չէ՝
բայց եթէ երկուստեք շարք մը դաւա-
ղիւրներու փոխադարձ արտաքսման
խնդիր:

Այդ մէջտեղ գործադրուեցաւ նաեւ
96 թուականին, հաւաստելով հայ հա-
տարակութեան թէ կուսակցութիւնը
կը մնար անխախտ և անբաժան, և
սակայն տխուր հետեւանքը այն եղաւ
որ, Հնչակեան կուսակցութիւնը ճեղ-
քուեցաւ ու բաժնուեցաւ երկուսի,
անկյուններով այլպէս սնվառ կուսակ-
ցութիւններու թիւը հայ յեղափոխա-
կան ասպարէզի վրայ:

Այդ, սիրելի հայրենակիցներ, ըս-
տորագրեալներս... թուով պատկանող
Վառնայի հայ հասարակութեան, սաս.
տիկ ցաւելով ու վշտանալով այս երկ-
րորդ Հնչակեան երկպառակութեան
վրայ, ջերմապէս պաշտպան հայ յե-
ղափոխական գաղափարին, անկեղծօ-
րէն փափաքող տեսնելու օրառաջ հայ-
կական փրկութեան գործը յաջ. գու-
թեամբ պսակուած, համակուած ան-
հուն տխրութեամբ, մանաւանդ այն
պատճառով որ, սոյն այս երկպառա-
կութիւնը վրայ կը հասնի ճիշտ այն
պահուն երբ ամէն ժամանակէ աւելի,
պէտք էր որ Ընդհ. Միութիւնը, Ընդհ.
համերաշխութիւնը տիւրէր, բոլոր հայ
յեղափոխական շարքերուն մէջ, կու-
գանք մեր ձայնը բարձրացնելու, յա-
նուն տանջուած հայրենիքի, յանուն
կտրուած, չարչարուած, կիսահոգի
գործած ազգութեան, յանուն մեր
սուրբ Ազատութեան, որուն կը հա-
ռաչենք մեր բոլոր սրտով, մեր բոլոր
հոգով կուգանք կոչ ընելու ձեր հայ-
րենասիրական զգացումներուն, ձեր
Ազգ. պարտաճանաչութեան զգացում-
ներուն ու դիտակցութեանը, որպէսզի,
օր առաջ, որքան կարելի է շուտ,
երկուստեք ձեռք առնէք բոլոր այն
միջոցները, որոնք ունիք ձեր տրա-
մագրութեան տակ, ձեռնարկէք վաղ-
ընդօրին շնչակեան Միացեալ Պատ-
գամաւորական ժողովի գումարման

վերջ տալու համար այնպիսի մի դը-
րուութեան, որուն սակէ աւելի երկա-
րիւր ուրիշ բանի չէ կարող առաջնոր-
դել բայց եթէ յեղափոխական գաղա-
փարի հետզհետէ անկման, զգացումնե-
րու ցամաքելուն, և, տխուր է ըսել,
ազատութեան յոյսերու ի դերու ելլե-
լուն:

Դուք չպիտի մոռնաք որ, Հնչակեան
Միութիւնը կը քցիք հետեւելով, հը-
նազանդելով Հայրենիքի ձայնին, գոր-
ծի պահանջին: Ազգի կամքին: Այդ-
պէս յայտարարեցիք ձեր պաշտօնական
օականի, Միութեան Հնչակի առաջին
համարին մէջ:

Այդ, նոյն այդ Հայրենիքի ձայնը,
նոյն այդ Ազգին կամքը ձեզ կրկին
ուրիշ բան չի հրամայեր, Ազգը ուրիշ
բան չի կամենար, ուրիշ բան չի ցան-
կար՝ բայց եթէ Միութիւնը, Միու-
թիւնը ձեր երկու Հնչակեան հատուած-
ներու միջեւ, ինչպէս նաեւ Միու-
թիւնը՝ բոլոր հայ յեղափոխական կու-
սակցութիւններու մէջ:

Այս է ահա ստորագրեալներուս մի-
ակ ևս բացորոշ կամքը, այս ևս կըլ-
լայ տարակոյս չունիք, բոլոր, ընդհ.,
հայութեան կամքը. և այդ կըլլայ
պայման մեր ամէն կերպ աջակցու-
թեան Ազգին սիակ յոյսը եղող յեղա-
փոխական շարժման, եթէ համոզուած
էք որ, ինչպէս չէ կարող ուրիշ կերպ
ըլլալ, առանց այդ աջակցութեան,
առանց ժողովուրդի օժանդակութեան
տնկարելի է ձեզ իրականացնել այն
նպատակը՝ որուն համար և որուն ա-
նունով ստանձնեք էք ձեր ծանր ու
զժուարիտ գործը: Ուստի, միացէ՛ք,
վաղընդօրին գործակցե՛ք ներկայ
տալիսպալի գրութիւնը և վերականգ-
նեցէ՛ք Հնչակեան Միութիւնը, որ
կ'ըլլայ հիմք, ընդհանուր հայ յեղա-
փոխական ուժերու ցանկալի Միու-
թեան:

Իսկ եթէ դուք կը շարունակէք յա-
մառել երկուստեք և շարաշար գործա-
ծել ազգին համբերութիւնը, այն ժա-
մանակ դուք իրաւունք չէք ունենար
սպասելու անկէ ո'ր և է աջակցութիւն:

Փափաքողներ Հնչակեան երկու
հատուածներու Միոքեան և Ազ-
գին Ազատութեան
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ե Կ Ո Յ Ց

Արտասահմանի մեր բաժանորդ-
ներէն կը խնդրուի որ իրենց յետ.
նեալ բաժնիքները անշաղկապ
ղրկեն, եթէ չեն ուղիւր որ թեր-
թիս սուքուած զաղրեցնենք և
իրենց պարտքերը հրապարակաւ
պահանջենք:

ՄԱԿԵՂՈՒՅԸ

Երբ կոմս Լամարոֆ, վերջացող գեղատեղի ամուսնու, Վիեննա գնաց կոմս կոլուխովսկիին հետ Արևելյան խնդիրներու վրայ խորհրդակցելու համար, Բալթիկ արտաքին գործերու նախարարը ցաւ յայտնեց որ այդ խօսակցութիւնները կայսրութեան երկու նախարարութեան միջեւ սահմանափակուած էին. Մակեղոնիոյ խնդիրը, կրտսէր, Ալպանիոյ խնդրէն անջատ չէ, ու Ալպանիոյ խնդիրն ալ մօտէն խտական շահերուն կը կապուի. կոմս կոլուխովսկի որպէս թէ հրաւիրեր է այն ատեն իր Բալթիկ պաշտօնակցը որ զայն ու մասնակցի Վատերմակն շատախօսութեան, Բայց կոմս Լամարոֆ պարզութեամբ կը յայտարարէ թէ դիւանագիտական հարաւոր չկայ մակեղոնիական խնդիր, ոչ ալ ալպանական խնդիր:

Ըլլան Զարեմու, կայսրնիւրու ու թագաւորներու նախարարներ, կամ հանրապետութեանց նախարարներ, մեր ժամանակ մը կառավարչները կը սիրեն այսպէս, հակառակ ամէն յայտնութեան, ուրանալ թուր այն զէպքերը որոնք համաձայն չեն իրենց կամքին ու ծրագրերուն: ու որքան խնդիրը կարեւորութիւն կրտսէր, այնքան փութկոտութեամբ անոնք հետեւանքներուն: կը հետեւին կամ անոնցմէ կը վախճան, այնքան ի յայտ կը բերեն որոշողին գալը չտեսնելու համար իր գլուխը աւազին մէջ պահող չայլամին պերճ վստահութիւնը:

Հազիւ թէ Աւստրո-Ռուս բարեկարգութեանց ծրագրի ներկայացուած էր ու մէջտեղ երեւցաւ ոչ միայն մակեղոնական, այլ նաեւ ալպանական խնդիրը, ալպանացի խումբերու կողմէ Միթրովիցայի յարձակումը, ու թրքական դուռնիներու զինադրութիւնն ու զսպումը, ուսական հիւպատոսին զէմ եղած սպանութեան փորձը, կոմս Լամարոֆի խօսքերուն՝ կուտար ողբերգական հերքում մը, որուն վրայ պէտք չէ զարմանայ: Միեւնոյն ատեն բովանդակ Մակեղոնիոյ մէջ ապստամբութիւն:

բական խումբերը իրենց գործունէութեան կը վերսկսին. օր չանցնիր գրեթէ ամանց ծանր ընդհարումի:

Ուժանակը կամուրջներ օդը կը հանէ, ու ամբողջ գիւղեր, ինչպէս Գառապինցիին, կը քանդուին համիտական զօրադուռներու ձեռքով ու աջակցութեամբ բարեմիտ պաշտպանութեան: Երբեք մէջ Սուլթանը չլուրտած չի գիտեր ինչ ուղղութիւն ընել: ալպանական ապստամբութեան զէմ ակներեւ հրամաններ եթէ տար, այն ատեն իր պալատ-բանին երկու ալպանական զօրագունները, ապստամբներուն վտանգին առջեւ պիտի զրտնուէր, այն զօրագունները, որոնք իր թանկագին անձը կը պահպանեն, եւ ուղած ատենին կրնան զայն կտոր կտոր ընել: Եթէ ալպանացիներու զէմ բան մը չընէր ու միմիայն մակեղոնացիներու զէմ զսպողական արեւնայի միջոցները ուղղէր, անշուշտ իր թագուն ու անխոտովանելի փափաքին համաձայն գործած պիտի ըլլար: Բայց մինչեւ ե՞րբ այն պետութիւնները նոյն իսկ որոնք իրենց կամուրջան գործութեամբ կը թուին կոտորած մը քաջալերել, ջարդելու բացարձակ ազատութիւն պիտի ստան ու յանկարծ Մարգարային զէմ պիտի չլինէին: Անշուշտ Վիեննայէն կայսրը զտակները, սպանութեանց իսկ մէջտեղը, Հաւանի կը բերեն միմիայն խօսքեր: Բայց Ապտուլ Համիտ ժամանակակից պատմութեան բաւական ծանօթ է, ու կը յիշէ թէ Քրիսկէր նախագահին ինչ պատահեցաւ: Քրիսկէր ալ Պէտրինէն ընդունած էր իրենց զաւաթ հեռագիրները, սակայն որ մը կայսեր կողմէ լքուեցաւ: այսպիսի զէպք մը կրնայ նոյնպէս պատահիլ այնքան զէջ համարու ունեցող Սուլթանին ալ:

Մակեղոնիոյ ժողովուրդներուն բազմաւ միայն Պալէն կախում չունի: այլ Մակեղոնիոյ ապստամբները ու եւրոպական դիւանատոմարները իրենք ալ շատ բան կրնան ընել: Հակառակ պաշտօնական թուր ըստածներուն, կարելի չէ որ Բարիզի ու Լոնտոնի մէջ նոյն բաները ըսեն ինչ որ Բիթրսպուրի, Վիեննայի ու Պէտրինի մէջ

կրնան, ու արեւելեան խնդիրներու մէջ Յրանսական ու Ռուսական քաղաքականութիւնները շատ դժուարութեամբ կը համաձայնին: Իրաւ, Գիւղին Գրքին մէջ կրնանք կարգաւ հետադիւրս, որոնք կատարեալ համաձայնութիւն մը կը հռչակեն: Բայց վերջին շաքարներու զէպքերը շատ լաւ ապացուցին թէ Ռուսիա ու Աւստրիա Գերմանիոյ համակերպութեամբ թուրքիոյ մէջ կը հետեւէին, գոնէ առժամակէս, համարալի քաղաքականութիւն մը, ու միւս կողմէ Յրանսական քաղաքականութեան կը մերձենար: Արդէն Ռայխստակի մէջ Մ. Պիւլօֆ Բաւարիայի թէ Աւստրո-Ռուս ծրագրերը իրենց կը թուէր մակեղոնական զգուշացուցական լաւագոյն լուծումը, ու Պալէնայի ընկերակցական երեւոյթները իր կողմէ ցոյց տուած էր թէ այդ առթիւ Գերմանական քաղաքականութիւնը Մակեղոնիոյ ու Հայաստանի կոտորածներուն նպաստաւոր կը լիլար: «Աղէկ գիտեմք, կրտսէր, թէ ինչ դիմադրութիւններ բարենորոգմանց զէմ կ'ընեն: անոնցմէ մէկը կ'ընայ Ռուսիոյ կողմէ, միւսը Գերմանիոյ կողմէ: Իսկ Յրանսաւ ու Անգլիա, անոր կարծիքով պատրաստ կը գտնուէին ոչ միայն Պէտրինի գաշնագրին բարենորոգմանցը: Պալէնայի թերակողմի արեւնայի խառնակութեան մէջ, երկու քաղաքականութիւններ կան, մէկ կողմէ մարդասիրական քաղաքականութիւնը, միւս կողմէ իբր թէ իրապաշտ քաղաքականութիւնը, որուն համաձայն հարկ է Պալէնայի փոքր պետութիւնները ըստազատել որ իրենց ուս ու աւստրիացի պաշտպաններուն հրամաններուն ստրկութեամբ հնազանդին, ու թոյլ տալ որ Սուլթանը արեւելի մէջ խղճեալ ազատութեան փորձերը:

Բիւլի ԳիթԱՌ (Լ'Եսթրադէ)

ԲԱՑ ՆԱՄԱԿ
ԱՌ ԶԱՄԻՐԱ ԻՇԽԱՆ

Հարկ կը համարեմ անգամ մը եւս հրապարակ գալ ոչ թէ ձեր գրած սուտ զրպարտութիւնները հերքելու համար, այլ թէ զձեզ ձեր ինկած ջղային տագնապալի դրութիւնէն փրկելու եւ թէ իսկապէս հանրային օգտին նուիրուած թերթի մը սխալները անօգուտ բաներով մոտակէ ազատելու համար, որչափ ատեն որ վստահ եմ թէ ճշմարտութիւնը իմ կողմն է, դիտեցէ որ շատ քաղաքավար պիտի ըլլամ ձեզի զէմ, եւ երբէ՞ք պէտք չեմ զգար ձեզի պէս բարկանալու եւ հայհոյելու: ամենայն լրջութեամբ միջոց մը պիտի առնալարկեմ ձեզի, գործերնիդ գլուխ հանելու եւ միանգամ ընդ միշտ գրկած արքանականութիւնը հանգրծ հանդարտեցնելու համար:

Կննդաւոր հրապարակագրի հովեր առած ինքզինքնիդ մէջտեղ նետած կը գրէք: Գրեցէ՛ք: Բայց ոչ թէ գրած ըլլալու համար, կամ կանխաւ ձեր օճախին որոշած այսինչ այնինչ անձը յանդիման բաժանելու համար, այլ, քննադատի անկեղմնակալ օգուով, ակնոցնիդ լաւ մը սրբեցէք, չորս կողմերնիդ լաւ մը դիտեցէք: եւ ամէն բան իրեն իսկական գոյներովը՝ նըկարագրեցէք:

Վախի որ Քոնսթանդուլի ազգային հրապարակը գեղծ եւ անպատուարեր պաշտօնեաներէ մաքրելու նուիրուած իբր անշահախնդիր մէկը կ'ընեն կուզէք ինքզինքնիդ: հիմա հրապարակաւ տագնապէք կը կարգաւ ձեզի, սա իշխանական դիմաւոր վար առէք: Ինքի պէս քաջաւոր եւ անձնավստահ եղիք: հրապարակ եկէք, ձեռք ձեռքի տանք ձեզի հետ: Ձեր կարծեցեալ յանցաւորն է ու է, նաեւ ունինք պաշտօնական մարմին մը՝ թաղական խորհուրդ մը, դիմենք թաղ: խորհուրդին ընդհանուր ժողով մը պահանջենք: պատճառ չունինք կարծեմ մերժուելու: — Ողջ վարժարանի սրահը 5-600 հոգի ժողովուրդ պարունակելու: չափ ընդարձակ է, որոշեալ օրուան մը մէջ՝

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

(69)

ԹԻՍՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԴ

ՎԱՆԱՑ ՁԱՂԸ

- Յուսահատական այս տիւրը ու միանգամայն քրտմունքի դրութեան մէջ ամբողջ չորս ժամ մնաց: Աչքերը գոց էին, սակայն միտքը կը շարժուէր:
- Կէսօրուան ճաշի ժամանակ չը կըցաւ վար իջնել, առարկելով որ չափազանց զրադուստիւնը ունէր:
- Իրիկուան զէմ սպասաւորը նորէն դողդալով սենեակը մտաւ եւ իմացուց թէ՝ «գեղացի քահանայ մը եկած է եւ անպատճառ տեսնել կուզէ զինքը»:
- Թող ըսէ՛ք որ աղան տունը չէ, յիմա՛ր բերանդ գարի՛ կը քաղէր, գոչեց ջոջը նեղացած ձայնով մը:
- Աղէ՛կ... չէ՞ որ դուք պատուիրած էք... Թոթովեց սպասաւորը:
- Ի՞նչ...
- Որ ստիպողական գործ ունեցող մը չմերժեմ:
- Ստիպողական գործ մը ունի՞ք:
- Այո՛... շատ ստիպողական է եղեր:
- Ըսէ՛ք, թող վեր գայ... հայտէ՛ մի կենաք:

- Սպասաւորը գնաց: Արդարեւ յաղթ կազմուածքով, ալիստուն մօրուքով, համառ վերաբերմով, ցնցոտի դարձած ու քրտնեղէն կաշի կտրած գլխակով ու տրեխներով քահանայ մը ներս մտաւ ու մրմնջեց:
- Ողջո՛յն, ջոջ աղա:
- Օրհնեցէ՛ք, Տէր Հայր, պատասխանեց ջոջը՝ հագին խղճելով իր հոգւոյն խորը մխրկտացող դառնութիւնը: Հրամայեցէ՛ք...
- Քահանան իր չուրջը նայելով բազմոցին վրայ նստեցաւ:
- Ի՞նչ ունիք ջոջ աղա, յարեց քահանան կարեկցական ձայնով մը:
- Իմն մը չէ... այսօր քիչ մը սկսեց եւ, նկատել տուաւ ջոջը:
- Աստուած առողջութիւն տայ, ջոջ աղա:
- Պահ մը լուրջութեան տրեց: Եկող եկեղեցականը խորհրդաւոր բան մը ունէր յայտնելու, սակայն չէր համարձակեր: Հետեւաբար երկար ատեն ճնշուած դրութեան մը մէջ մնաց:
- Ջոջը նկատելով որ քահանան կը քաշուէր իր այցելութեան պատճառը յայտնելու, ցուրտ ձայնով մը հարցուց:
- Ո՛ր գեղէն էք, Տէր Հայր:
- Ի՞նչ ըսեմ ջոջ աղա, դիւղս ալ մոռցեր եմ...
- Թոթովեց քահանան լալակութեամբ եղանակով մը: Միթէ գեղ մնացիք է մեզի:
- Ի՞նչ է եղեր որ...
- Ի՞նչ ըլլայ... կրակն ինկեր կը վառի:
- Պատճառը:
- Պատճառը կառավարութիւնն է:

- Ի՞նչ կրնէ կառավարութիւնը:
- Երկու օր է որ տասներկու հոգիէ բաղկացած զապիթներու խումբ մը գիւղը մտած է... Այդ մարդիկ ըսեցին մեր Ռէն Ապրոն, ծեծեցին ու քիչն բերնէն արիւն բերին...
- Ի՞նչ կը պահանջէին:
- Կը պահանջէին միտքն ու յայտնեք Ներսէս Արծրունի ըստուած «քաջաղ»ին ուր ըլլալը:
- Ներսէս Արծրունի՞:
- Այո՛, ջոջ աղա:
- Է՛յ, դուք տեղեկութիւն մը ունի՞ք:
- Եթէ ունենանք կարող ենք յայտնել:
- Խիստ լաւ: չըսէ՛ք թէ ատանկ մէկը տեսնուած չէ:
- Ըսենք Բայց անոնք չեն համոզուիր: Գիշերով տունը կ'օրհնու պիտի գային, եւ իմացայ ու փախայ:
- Դուք քահանայ մըն էք... զապիթներն ի՞նչ կրնային ընել ձեզի:
- Ձէ՞ որ պիտի երգում ընել տային:
- Թո՛ղ երգում ընել տային:
- Ի՞նչպէս երգում ընէի:
- Ձեմ հասկնար... չէի՞ր կրնար:
- Այո՛, չէի կրնար:
- Պատճառը...
- Որովհետեւ խղճիս ու կոչումիս հանդէպ պիտի մեղանջէի:
- Ըսել է թէ՛ Ներսէս Արծրունի ուր ըլլալը դուք գիտէ՞ք:
- Այո՛, գիտեմ... եւ ես պահած եմ զինքը:
- Ջոջը ցնցուեցաւ: Ինչպէս չանթէ զարնուած մարդ

ժողովուրդը հրապարակաբար վարժարանի սրահը, բնակարանը հոյ միայն ձեռք ջր- ղային դր... թիւեր խաղաղորդ եւ ըզ- ձեզ անհանգիստ ընող քաղաքան, այլ նաեւ որչափ որ կան քաղաքիս հըրա- պարակին վրայ զիդձ, խարդախ, տն- բարոյական, պնակալէզ եւ վերջապէս քաղաքիս հայ հասարակութեան ամէն զաւակարգի բարոյականին վտանգը ու պաշտօնը պաշտօնեաներ, որոնց հա- մար յաճանքս եւ պատրաստ եմ ո՛չ միայն վկանելով, այլ եւ soflուան- ներով հաստատել, ամենուն ուլ դատը տեսնենք, հրապարակաւ ժողովրդեան առջեւ եւ՛անոր հաւանութեամբ գրեմք անոնց վճռագրերը, եւ յետոյ թոյլ չը տանք անոնց մինչեւ իսկ լինի քաղա- քին մէջ վայրկեան մը մնալու։

Այս ամէնը ընելէս վերջն է որ կարգը կուգայ լրագրին. այն ատեն ոչ միայն մէկ լրագրի, այլ ամէն հայ լրագրող թեան կը զրկենք մէյմէկ օրի- նակ անոնց վճռագրէն, որպէսզի հը- րապարակաւ հայ ազգութեան ճանչ- ցնենք այս անտիկ հանրային բարոյա- կանի եւ շահերուն վնասակար միջոցա- ները յակահէ յանուանէ, որով ո՛չ մի- այն Գօսթանցայի հայութեանը սգա- տած պիտի ըլլանք այս չարիքներէն, այլ, ամբողջ հայութիւնը, կարծեմ զոք ալ կը խոստովանիք ասոր օգ- տակարութիւնը. Օ՛ն ուրեմն, կապա- սեմ, եթէ վարանիք այս առաջարկն ընդունելու, եւ չը գործադրէք, առա- ռաւելն մինչեւ մէկ ամիս, այն ատեն այլ եւս հարկ չեմ տեսներ վերստին հրապարակաւ կրկնելու թէ, քու զը- րածնիդ ամէնն ալ ստորին շահերու վրայ հիմնուած անոնքի ու անխիղճ սուտեր են, եւ զղումնքս ու արհա- մարհանքս միայն կը մնայ բաժին քեզ եւ քու իշխանական խոշոր գլխարկին։

Քերտվիք՝ Նախապէսեան
Գօսթանցայ 24 Մարտ 1903.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիոյ Տ. Սահակ Կաթողիկոսը արդէն Սիս հոգած լինելով

չըջարեցողիկան մը հանած է, որով կը ծանուցուի թէ Պժուժը տեղի պիտի ունենայ ամսոյս 20ին եւ Միւսուի օրհնութիւնը 27ին։

— Լայրցիկի մէջ առեւտրական բարձրագոյն վարժարան մը հաս- տատուած է 5—6 տարիէ ի վեր, ուր կուստին այժմ 5 հայ ու- սանողներ։ Այս ակադեմիական հաս- տատութեանն այս տարի ընթաց- ցաւարտի վկայական ստացած է Պ. Բ. Իշխանեան անուն ուսանող մը, որ երկրորդ հայ չըջանաւարտն է այս բարձրագոյն հաստատու- թեան։

— Ռուսմանիոյ Թրքու-Օգնա քաղաքին Տ. Ղեւոնդ քահանայ Միքայէլեանին անպայման ժամա- նակաւ քահանայադրածութենէ դուր- րեցուելուն մասին պատրաստուած չըջարեցողիկաները զրկուեցան Պուլ- կարիոյ եւ Ռուսմանիոյ բոլոր թե- մերուն, յանձնարարուելով որ կրօն- ժողովոյ սոյն որոշման գործադ- րութեան հսկեն եկեղեցւոյ հոգե- լոր պաշտօնեաները։

— Պոլսոյ Նպաստից -Յոսէան- ժողովը իր վերջին նիստին մէջ նկատողութեան առած է զաւա- ռական նպաստը նկատարհանող վարժարաններու թոշակաց բաշի- ման նոր ցանկ մը, որուն համա- ձայն ամէն մէկ վեճակի առաջ- նորդ իրեն սահմանեալ գումարը ստանալով դպրոցներ պիտի բա- նայ եւ բոլոր վիճակին յատկաց ուած գումարէն անոնց տրուելիք բաժինը ի՛նք պիտի սահմանէ։

— Մոռնաւորակի մէջ էր կուր- գանք։

«Տփղիսէ կը զրեն թէ վեճե- տիկ հրատարակուող Բազմալէպի կապիւսեան բաժանորդներէն 100 հոգի ետ զրկեն եւ իրենց թեր լծերը. ասոր պատճառն է նոյն

հանգէսին մէջ տպուած շարք մը լուսանկարներու առթիւ, Հայոց Հայրապետին իրեն արժանի հոգե- լոր կարգին ու գիրքին վայելուչ յարգութեանը զիպուրդ. այս- պէս, այդ լուսանկա ներու մէջ տեղը դրուել է Միքիթարեան մը, անոր ալ կողմը հանգուցեալ աշ- խարհական մը երկուքն ալ նըս- տած. իսկ Հայոց Հայրապետը՝ իրրեւ հեղինակ կրօնական եւ բա- րոյացուցիչ ընտանեկան երկերու, անոնց քովը ձախ կողմը դրուել է եւ այն ալ ոտքի վրայ, Թէեւ Բազմալէպ տեսնելով որ իր բա- ժանորդները խմբովին պիտի կոր- սնցնէ, փոխել է իշխու նկարը եւ եւ այս անգամ Ս. Կաթողիկոսը բերել գրեմ է ալ կողմը, բայց այս ուշ մնացած շահագրգռութիւնը չէ կրցեր գարմանել առջի անձա- լակութեան աննպաստ տպաւորու- թիւնը եւ բաժանորդներէն ոմանք այդ նոր ծրարն ալ ետ զրկել են։ Այս պատահածը նոր հաստատու- թիւն մըն է ժամանակէ մը ի վեր մեր այն գրածներուն թէ վեճե- տիկաններու այդ պաշտօնական հրատարակութիւնը՝ Բազմալէպ բոլորովին անփորձ ձեռքերու մէջ կը գտնուի ներկայիս մէջ»։

— Ֆիլիպէ առանց քահանայի մնացած ըլլալով, Պատրիարքա- րանէ հեռագրուած էր Ռուսուգ, ուր երեք քահանաներ կան, որ- պէս զի անմիջապէս Ֆիլիպէ քա- հանայ մը զրկուի։ Ռուսուգէն հեռագրուած է Պատրիարքարան թէ իրենց Աւագերէց Տ. Կորու- պետ քհն. հիւանդ ըլլալով, հա- զիւ երկուքը կը բաւեն։ Պատ- րիարքը անմիջապէս հեռագրաւ համայնած է թէ անհրաժեշտ է որ Ֆիլիպէ քահանայ մը զրկուի գատկի առթիւ։

— Պատրիարքարանի նորընտիր Ա. գործակատար Ֆէճեան Արիս, որ Կիւոց կը գտնուէր, Պոլիս ժամանելով իր գործին զուլսը անցեր է։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ծանր եւ վշտայից հիւանդու- թեանէ մը բռնուած՝ ե քանի մը բժիշկներու դորմաններէն չօգ- տուելով, յուսահատեալ գիմեցի Տօքթ Բօքոզին, որ 3—4 ամիս տունս այցելելով ձրիաբար զիս դար- մանեց եւ երբեմն դիպագինս վճարեց, այժմ կատարելապէս բժշկուած կու- գամ հրապարակաւ երախտագիտու- թիւնս եւ շնորհակալութիւնս յայտ- նելու իշխու աղնիւ բժիշկին։

ԿԱՐԱՊԵՏ ՂՈՒԿԱՅԵԱՆ
(Երկարար)

Վառնա

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

Թիապարտի Ա. հատորը զրկած ենք մեր հետեւեալ գործակալներուն. ուստի այդ խիստ հետաքրքրաշարժ ու շահեկան գիրքը ստանալ փափաքող- ները՝ կրնան գիմել։

Պուրկազ	Տ. Արտաշէս Հարենցի
Ֆիլիպի	» Գ. Թեթիւնճեանի
Շուրա	» Ասլան Տօնիկեանի
Ռուսուգ	» Սարգիս Մանուկեանի
»	» Է. Գաբրիէլեանի
Սօփիա	» Ասատուր Մկրտիչեանի
Տօպրիշ	» Նիկողոս Սիսակեանի
Սիլիստի	» Յ. Սարգիսեանի
Սիլիստի	» Տէր Վաղինակ Հօր
Պուրեշ	» Յովհ. Փափագեանի
»	» Յովհ. Պապեանեանի
Գօնարանց	» Սիսակ Մեղիքեանի
Կարա	» Տէր Ղեւոնդ Հօր
»	» Գրիգոր Յակոբեանի
Գաւիռ	» Կ. Էրզնկացեանի
Աղեփանդ	» Ս. Մարգարեանի
Պարսն	» Զ. Հայրենեացի խմբ.
Ֆիլիպուրի	» Կ. Մարուսեանի
Ռուս	» Յակոբ Ֆրանքեանի

170 Սաւաթ Պրիճ
Բ. հատորին ալ 300 երեսները տպա- գրուածին որ քիչ ատենէ կամբողջանայ։

մը. ստուգումով մը զեղացի քահանային նայեցաւ ու հարցուց։

— Վտանգաւոր տեղ է գտնուած տեղը։

— Վտանգաւոր տեղ մը չէ, բայց կը վտանգամ որ մասնուի։

— Ո՞վ պիտի մասնէ։

— Մեր մէջը մասնիչ կը պահուի։

— Ուրեմն։

— Ահա ձեզի դիմած եմ... դուք մտածեցէք։

— Ես ի՞նչ կրնամ ընել։

— Ի՞նչպէս «ինչ կրնամ ընել...» հապա թո- ղունք օր ազդին մէկ հատիկ մարդը կախաղան բար- ձրանայ. մէյմը հարցուցէք ձեր խղճին։

— Կա՛ւ, ի՞նչ կուզէք որ ընեմ։

— Հոտիս, զիչեւով քաղաքը բերել...

— Է՛յ...

— Ձեր որոշած ապահով տեղը պահել։

— Անկարելի՛ է... ընտանիքիս կործանումին պատճառ ըլլամ։

— Մտածեցէ՛ք, ջոջ աղա՛, կի՛ն եւ ալ ձեզի պէս վարուէ՛ի, ի՞նչ պիտի ըլլաք այդ մարդուն վիճակը...։ Ձէ՛ որ մեր երջանկութեան համար իր անձը նուիրած է։ Ձէ՛ որ Ազգին զինուորն է սին։ Կամքի ուժը մեծ մարդոց համար է...։ զուք մի՛ մոռնաք թէ մեծ մարդ մըն էք։

Ձոջը չը կրցաւ պատասխանել։ Ա՛լ ինքը՝ տէրը չէր իր անձին, տէրը չէր իր զգացումին, վերջա- պէս՝ տէրը չէր իր հոգեկան բովանդակ տրամադրու- թեանը։

— Մի՛ լռէք, ջոջ աղա՛, ժամանակը կանցնի, ընդհատեց քահանան։

— Կը պաղաւթի՛մ, Տէր հայր, տունիս չուրջը լըր- տեսներով պաշարուած է, թոթովեց ջոջը մորմուք- ուած ձախով մը. եթէ կուզէք իմ զաւակներուն հացին մէջ արիւն խառնել, ըլէ՛ք այդ կերպով։

— Ուրեմն որո՞ւ դիմել հարկ է։

— Ձեմ՝ գիտեմ... այնպիսի՛ ժամանակներու մէջ կը գտնուիք որ մէկու մը վտանգին անդամ սնկա- լելի է։ Դուք ուրիշ ո՞վ կը ձանչէք քաղաքին մէջ։

— Մէկը չեմ ձանչել։

— Հապա ուսկի՞ց լսած էիք իմ անունս։

— Ճշմարտութեամբ՝ Ներսէս Արծրունիէն Անիկա մեծ հուստք ու վատահոլութիւն ունի ձեր վրայ։ Թէեւ անձամբ չէ տեսած ձեզ, սակայն ձեր ներքին դարձումով երբեք մէջ ունեցած հայրենասիրութիւնը իմացեր է։ Այնքան վտանգ է ձեր վրայ որ Գուրո Շէյխի մի՛ նետ խօսած ժամանակ, մեծ սքանչացու- մով կը պատմէր ձեր ընթացքը։

— Գուրո Շէյխ մ'ըմբ։

— Այո՛։

— Ի՞նչ տեսակ մէկն էր։

— Երկայնահասակ, յողթանդամ ու թաւ մօրու- քով Շէյխ մըն էր։

— Ներսէս Արծրունիին հետ խօսեցա՞ւ ան։

— Ընէ՛լ է։

— Ի՞նչ նիւթի վրայ։

— Բուրախուր եւ հայիրու միջիւ Միլիթիւն մը հաստատուելու վրայ։

— Բանի՞ օր առաջ։

— Թերեւս շաբաթ մ'առաջ...։ աղէկ չեմ յիշեր։

— Վատահոլի մէ՞կն էր այդ Շէյխը։

— Կատարելապէս։

— Ձոջը մասամբ մը հանդարտ դագ ինքզինքը։ Գիշ մ'առաջուան իր տունը մոտող Գուրո Շէյխը ձիւտ քահանային ըսած Շէյխն էր, որմէ ա՛յնքան կասկածած էր։ Ուրեմն՝ այդ կողմէն վախ մը չու- նէր. եթէ ծանր ու դժուարին խնդիր մը կար, Ներ- սէս Արծրունիի ապաստանարանին որոշումն էր։ Կրնա՞ր իր տանը մէջ պահել զինքը, թէ ո՛չ։ Մը- տածեց...։ Երկար ատեն մտածեց...։ ու՛ իր մեղապարտութիւնը խոստովանող մարդու մը պէս բացազանչեց։

— Տէր հայր, տունս կրնդունիմ զինքը։

— Աստուած օրհնէ՛ ձեզ, մըմնեց քահանան, ու ոտքի ելնելով մէկդի նետեց իր քահանայական սը- քեմը, ցոյց տալով Գուրո Շէյխի՛մը տարագը։

— Ի՞նչ է այս...։ թոթովեց ջոջը։

— Գուրո Շէյխ մըն եմ, պէ՛յս, ըսաւ ծպտեալ քահանան՝ ծպտելով,

— Դո՞ւք։

— Այո՛, ես։ Բայց մի՛ դարմանաք...։ Շէյխ մըն ալ չեմ, այլ բարեկամդ Ներսէս Արծրունի եմ։ Ձոջը կարծեց թէ երազ կը տեսնէր...։ կարծեց թէ ուրիշ երեւակայական աշխարհքի մը մէջ փոխա- դրուած էր, ուր դիմակաւոր լրտես մը յանկարծ քահանայ մը դարձած էր եւ կը համարձակէր ըսելու թէ «Ես Ներսէս Արծրունի եմ...։»։

(Շարունակելի)

... Խմբագիր

(1524)

Իշխմէ մտապայէնէթ կէօրիւնիյօր։
Պոռ մտապայէնէթի հաւի իթմէք իշխւն
բարա վէրմիշ օլաւար նէ մըզտար
վէրտիքլէրինի հէր հաւտէ պիղէ պիլ-
տիքմէլէ, վէ պիլր տահա օ իրպի ահ-
վալլէ միճնուլ օլալ քէսաւնէ ճնիլիյէթ
իթմէմէլի տիլրէր։

Þ þ ħ ρ ϕ τ υ

— Ակպանիանըն իսկի Սերպիա
թապիր օլընան դըթաաընտա էլան
գար եաղմագտա վէ սօվուգ տէ.
վամ իթմէքտէ օլտըղը կիպի, ժե-
նէբալ Հիւմի բաշանըն թէհտիտա.
թը վէ պիր թարուֆտան Անաուօ-
ղուտան կէէն ասքէրլէրին օ' թա.

—Միւթ վէճիւ Շշէրպինաւ Լա
զարեան մէքթէպինտէ իւմինի թահ.

SULTAN

ՄԻԻԹԷՆԷՎՎԻՅԷ

— Ֆրանսա բէյիսի Մ. Լուպէ
իէ՛ խարիճիէ նազըրը Մ. Տէլ-
գասէ, պահրիէ նազըրը Մ. Բէլ.

ՍՕՆ ՀԱՎ ԱՏԻՍԱԹ

ԹԷԼԵԿՐԱՖԻԱ

Սթանիսլո, 15 Ապրիլ

Մանասկերը վերայեթի տախի-
տիւտե Սմէրտէշտէ, ապրիլ 10տա
րէտիֆ աաքերլերի վէ պիւր ուր-
կար չէթէօի պէրհնտէ չէտիտ
պիւր միտատէվէ վիոգոս պուլտու :
Չէթէ 75 քիչտէն միւրէքքէպ
օլուպ պէշ բէրիսի վրար . բէ-
րիպէրտէն պիւրիսի Սարսֆօվ ըտը,
րէտիֆլերտէն 4 քիչի էօլտիւ 3
հարլլէնտի, Չէթէ ճիվար քէօլէ-
րին էհպիսիինն մուապէնէթի իլէ՝
պէճէ գօշտր :



Օրսրիտսքա սօղադ Նօ. 8

42 ፌኒያቡባታ

Կեսարացի Նշան Մարտիրոսեան
 անուանեալ վաթսանեոր է , այժմ կը
 խնդրուի որ անոր ուր վախճանած ու
 թաղուած ըլլալը գիտցողները իմբա-
 րու թեանս իմաց տան :

ՎԱՐԺՈՒՀԻ Կ'ՈՒԶՈՒԻ

Պոլկարիոյ ազգային վարժարանն է-
լէն միոյն չամար վարժուչի մը կը
ինտոտւի, որ իր պարկեշտութեամբը
ու մտաւոր կարողութեամբը վստա-
սութիւն ներշնչէ մեզ եւ տղւոյն
մատ. Հոգաբարձութեան:

ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ՝

Ամերիկայի հրատարակուող «ՁԱՅՆ
ՀԱՐՅՆԵՆԵՍ» շաբաթաթերթը ով որ
առանալ կուզէ, կրնայ ԻՐԱՆԻԱՆՔԻ
մեքագրութեան միջոցաւ բաժանորդ
դարձուիլ, կանխիկ շրկելով 10\$ ու
էն ֆրանք առնալով, մէկ տարուան
աւանդ:

Одговорникъ Е. Драгулевъ

Печатница Взаимность Варна.